Democracy Development Foundation

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ PJC
PUBLIC JOURNALISM CLUB

HELSINKI CITIZENS ASSEMBLY

"Protection of Rights without Borders" NGO

# Ներքին գործերի կուխնյա

## Հանրային արշավ՝ հանուն Հայաստանի ոստիկանության իրական բարեփոխումների

#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ

2023 թ. հուլիսից մինչև 2024 թ. փետրվար անցկացված արշավն իրականացրել են Հանրային լրագրության ակումբը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն՝ Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ և համակարգմամբ՝ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակում:

# Արշավի նպատակները

- Բարձրացնել հանրության իրազեկվածությունը ոստիկանության բարեփոխումների խնդիրների վերաբերյալ
- Ստանալ հանրային աջակցություն՝ ոստիկանական բարեփոխումների ռազմավարությամբ սահմանված և իրական գործողությունների հակասությունները ներկայացնող հրապարակումների շուրջ
- Նպաստել ոստիկանական բարեփոխումների ոլորտում հանրային վերահսկողությանը՝ հասնելու հաշվետվողականության և թափանցիկության
- Կոչ անել ԱԺ-ին հրավիրել խորհրդարանական լսումներ, որտեղ ՆԳ նախարարը կպատասխանի հանրությանը հուզող հարցերին

# Արշավի գործողությունները

✓ Ստեղծել ՆԳՆ այլընտրանքային ֆեյսբուքյան, ինստագրամյան էջեր և տելեգրամյան ալիք՝ բարեփոխումների խնդիրների մասին բարձրաձայնելու համար









# Արշավի գործողությունները

Համագործակցություն ինֆլյուենսերների հետ՝ արշավի ուղերձը հանրության ավելի մեծ շրջանակի հասցնելու համար









# Արշավի գործողությունները

✓ Ստորագրահավաք Change.org-ում՝ ՆԳ նախարարի մասնակցությամբ Ազգային ժողովում հանրային լսումներ հրավիրելու պահանջով




#ՆախարարԱրիԽոսենք՝ հանուն ոստիկանության իրական բարեփոխումների



1,582 Signatures — 2,500 Next Goal

Support now

#ՆախարարԱրիԽոսենք՝ հանուն ոստիկանության իրական...

Share on Facebook

Share on VK

Send an email to friends

Send a message via WhatsApp

Tweet to your followers

Copy link

Started December 7, 2023

**Why this petition matters**

Started by Հանրային լրագրության ակումբ

# Արշավի գործողությունները

**ՔՀԿ-ները պահանջում են ոստիկանական բարեփոխումներին ուղղված խորհրդարանական լսումներ՝ ՆԳ նախարարի մասնակցությամբ**

Հանրային լրագրության ակումբը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը և «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն համատեղ նախաձեռնությամբ վերջին ամիսներին իրականացնում են **հանրային արշավ՝** ուղղված ոստիկանության համակարգում հայտարարված բարեփոխումների պատշաճ կատարմանը։

Մենք՝ ներքոստորագրյալ հասարակական կազմակերպություններս, խորը մտահոգություն ենք հայտնում ոստիկանության բարեփոխումների վիճակի և առանցքային խնդիրների լուծման բավարար առաջընթացի բացակայության վերաբերյալ։

Արշավի շրջանակում ՔՀԿ-ները  նախաձեռնել են **ստորագրահավաք՝** կոչ անելով որպեսզի Ազգային ժողովում հրավիրվեն խորհրդարանական լսումներ, որտեղ ՀՀ ներքին գործերի նախարարը պարզաբանումներ կտա այն խնդիրներին և խախտումներին, որոնց մասին քաղաքացիները ահազանգել են վերջին ամիսներին։ Մտահոգ քաղաքացիները, ՔՀԿ-ների և լրատվամիջոցների ներկայացուցիչները նախարարին հանրայնորեն հարցեր հնչեցնելու և պատասխաններ ստանալու հնարավորություն պիտի ունենան։

Մեր նախաձեռնությունը կօգնի հանրային վերահսկողություն սահմանել ոստիկանության բարեփոխումների համար հատկացված զգալի միջոցների նկատմամբ, որպեսզի հարկատուների փողը ծառայի իր նպատակին, այն է՝ օրենքին ծառայող և մարդու իրավունքները պաշտպանող ոստիկանության ծառայություն։

Միացեք այս նախաձեռնությանը, եթե․

- ✓ Դուք ուզում եք ապրել մի հասարակությունում, որտեղ ոստիկանը բարեվարք է, կիրթ, ծառայում է օրենքին և պաշտպանում մարդու իրավունքները։
- ✓ Մտահոգված եք ոստիկանության համակարգում կոռուպցիայով, մարդու իրավունքների ոտնահարումներով, խոշտանգումներով ու համակարգում առկա անպատժելիությամբ։

Ստորագրելով՝ դուք պահանջելու եք հրավիրել Ազգային ժողովի խորհրդարանական լսումներ՝ քննարկելու ոստիկանության բարեփոխումների մարտահրավերներն ու հնարավորությունները։

**Հանրային լրագրության ակումբ**
**Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ**
**Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ**
**«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ**
**Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ**
**Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության կոալիցիա**
**«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ**

## Կոչ-նամակ ՔՀԿ-ներին՝ միանալու ստորագրահավաքին և ԱԺ-ին ուղղված պահանջին

# Արշավի արդյունքները

2500 հետևորդ,  60 հրապարակում՝ #ՆախարարԱրիԽոսենք հեշթեգով և ստորագրահավաքին միանալու կոչով, 512,000 reach, ,60,000 engagement

199 հետևորդ, 40 հրապարակում՝ 119,706 reach

101 բաժանորդ, 39 հրապարակում՝ 6668 դիտում

1615 ստորագրություն՝ Change.org-ում

11 ՔՀԿ-ների կոչ՝ ուղղված ԱԺ-ին

Ոստիկանական բարեփոխումներին և արշավին  նվիրված քննարկում՝ 1in.am-ում. 10.000 դիտում, արշավի ամփոփման հանրային քննարկման տեսագրություն. մոտ 3300 դիտում

# Արշավի արդյունքները

Ինֆլյուենսերների հրապարակումներ ոստիկանական բարեփոխումների խնդիրների վերաբերյալ՝ ստորագրահավաքին միանալու կոչով - 30 հրապարակում (reel, story, status) 36,086 reach, 59,806 engagement, 344,346 դիտում



Վերջին շրջանում ոստիկանական համակարգի ամենաուշագրավ խախտումները ներկայացնող այս ռիլն ունի

**219,000**

դիտում Ինստագրամում

# Արշավի թեմատիկ ուղղությունները

- Ընտանեկան բռնության, թմրանյութերի վաճառքի դեմ պայքարում, ՃՊՏ-ների կանխարգելման հարցում ոստիկանության ձախողումներ
- Պարեկների կրթության անբավարար վիճակ
- Բռնարարքներ ոստիկանների կողմից
- Բարեփոխումներին ուղղված ֆինանսական հատկացումների հարցում հաշվետվողականության և թափանցիկության անհրաժեշտություն


#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ
2+2 = IIII
POLICE


#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ
0
ՈՍՏԻԿԱՆ Է ՊԱՏԺՎԵԼ
ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ ՁՈՀՎԱԾ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ՀԱՐԱԶԱՏՆԵՐԻՆ
ՔԱՇՔՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ


#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ
Ինչպես են IQ-թեստն անցած
պարեկները նայում չանցածների վրա


Պետությունը որոշել է՝ այստեղ
հանցակազմ չկա
POLICE
ՀՆԳ


#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ
-«Պոլիգրաֆում» թմրանյութեր կան,
ներխուժում ենք: Պլան առաջարկեք:
-Հես ա, շեֆ ջան, հյուրասիրվեք: Բա
«Պոլիգրաֆի» հարցո՞ւմ ինչ անենք:


#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ
Անչափահասների հանդեպ
սեռական և անառակաբարո
գործողությունների
հետքերով 18 գործ է
ուղարկվել դատարաններ
2022-ին


#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ
ՃՏՊ-ների պատկերը ՀՀ-ում
վերջին 10 տարում
Տ/մ մոտավոր քանակ
(ըստ ԱՊՊԱ պայմանագրերի)
407,000
498,000
606,000
2013
2017
2022
Զոհերի քանակ
316
279
321
2013
2017
2022

# Արշավի ձեռքբերումները

- Ոստիկանական բարեփոխումների խնդիրների իրազեկում հանրության լայն շերտերի
- Հնարավորություն հանրության համար՝ կիսվել ոստիկանության հետ ունեցած խնդրահարույց պատմություններով. անանուն տարբերակով ավելի շատ են ներկայացրել
- ՔՀԿ-ների համախմբում՝ ԱԺ-ին ուղղված պահանջագրի համատեքստում
- Ստորագրահավաքին միացած ակտիվ հանրություն

# Արշավի ամփոփում



հանրային քննարկում

ՔՀԿ-ների հայտարարության տարածում լրատվամիջոցներով

ՔՀԿ-ների պահանջագրի ներկայացում Ազգային ժողովին

#ՆԱԽԱՐԱՐԱՐԻԽՈՍԵՆՔ

# Արշավի իրականացման խոչընդոտները

- Արցախում ստեղծված ճգնաժամային իրավիճակ
- Ինֆլյուենսերների հետաքրքրվածության պակաս՝ անդրադառնալու թեմային

# Չմոռանանք դրական ոստիկաններին





# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Փայտյան
Հաղորդակցության և ծրագրերի համակարգող
Հանրային լրագրության ակումբ

+37493270808

hpaytyan@publicjournalism.am

ՀԼԱ PJC
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
PUBLIC JOURNALISM CLUB